ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 27. Յունվարի 16-ին Սինոդը լսեց Ատրախանցի Եղիսաբէթ Մոլոդցովեանի անցեալ տարուայ Օգոստոսի 17-ի խնդիրը իւր ամուսնու՝ Պետրոս Մոլոդցովեանի գերեզմանի վրայ մահարձան կանգնեցնելու մասին, որոշեց. բացատրել Ատրախանի առաջնորդին, թէ ննջեցելոց գերեզմանների վրայ որ և է դամբարան կառուցանելն արգելուած չէ, եթէ միայն դամբարանում չլինի վէմ քար կամ սրբոց պատկերներ, ուստի և Մոլոդցովեանի գերեզմանի վերայ թոյլ տալ կառուցանել նորա այրիի ցանկացած դամբարանը, եթէ վերջինս համապատասխանում է վերոյիշեալ պայմաններին։

Թ. 44. Յունվարի 23-ին Սինոդը որոշեց. թեմերից ուղարկուած տեղեկագրերը՝ եկեղեցիների, վանքերի, դպրոցների, կուսակրօն և աշխարհական հոգևորականների մասին և եկեղեցիների ու վանքերի գոյքերի մասին, ուղարկել ըստ պատկանելեաց հետևեալ կարգով. նախ՝ Բեսսարաբիայի և Ատրախանի թեմերի տեղեկագրերից մի մի օրինակ, Սինոդի վաւերացումով, ներկայացնել Ներքին Գործերի Նախարարութեանը. երկրորդ՝ Կովկասի չորս թեմերի տեղեկագրերից երկ-երկու օրինակ ներկայացնել Կովկասի փոխարքայի Դիւանատանը, երրորդ՝ բոլոր թեմերի տեղեկագրերի մնացած մի մի օրինակները, կոնսիստորիայի ստորագրութեամբ, տեղեկութեան համար կցել գործին, և չորրորդ՝ ազդարարել կոնսիստորիաներին, որ հոգ տանեն տեղեկագրերը այսուհետև լրիւ և ժամանակին հասցնելու։

Թ. 48. Յունվարի 23-ին Սինոդը լսեց Վաղաշապատում բացուելիք «Դաւթեան» Գիւղատնտեսական դպրոցի գործը, որոշեց. նախ՝ յատկացնել «Դաւթեան» Գիւղատնտեսական բաժանմունքին Ս. Շողակաթի վանքի Մայր Աթոռին պատկանող 22 դեսեատին 1850 քառ. սաժ.

հողը ի շահեցողութիւն և թոյլ տալ Վաղարշատի հասարակութեանը յատկացնել նոյն Գիւղատնտեսական բաժանմունքին ի շահեցողութիւն այլ ևս մինչև 30 դեսեատին հող Վաղարշապատի բնակիչների ձեռքին եղած շնչաբաժին հողերից. երկրորդ՝ թոյլ տալ Վաղարշապատի հասարակութեանը յատկացնել Շահ-Արխի իւր բաժին ջրից երեք բաշ ջուր նոյն «Դաւթեան» Գիւղատնտեսական բաժանմունքին և երրորդ՝ ընդունելով հանգուցեալ Եգոր Դաւթեանի ժառանգների առաջարկած պայմանները, դպրոցի հիմնարկութեան վերաբերմամբ, առաջարկել նոցա մտցնել ներկայացրած «նախագծի» մէջ այն կէտը, թէ ինչպէս Գիւղատնտեսական դպրոցի տարեկան նախահաշիւը, նոյնպէս և բաժանմունքի կառավարիչը պիտի հաստատուին Ամենայն Հայոց Հայրապետի կողմից։

Թ. 49. Յունվարի 25-ին Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի 1911 թ. Օգոստոսի 25-ին № 6500 յայտարարութիւնը Երևանում՝ բնակուող հրէուհի Բասիա Սէլցէրին Հայ եկեղեցու ծոցը ընդունելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել հրէուհի Բասիա Սէլցէրին Հայաստանեայց եկեղեցու ծոցը և մկրտել նորան մեր եկեղեցու ծիսով, ճշտութեամբ կատարելով օրինաց XI հատ. 7 յոդ. յաւելուած կանոնների պահանջները։

Թ. 52. Յունվարի 25-ին Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի 1911 թ. մայիսի 26-ի № 3800 յայտարարութիւնը Աղեքսանդրապոլի Հայոց Հոգևոր Կառավարութեան հաշուեմատեանների ստուգութեան մասին, որոշեց. կանոնաւոր համարելով Աղեքսանդրապոլի սիթոռապատական կալուածների վերաբերեալ հաշիւները 1909 և 1910 թ. թ. համար, վերադարձնել յիշեալ թուականների հաշուեմատեանները Աղեքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեանը և պատուիրել աւարտել բոլոր հաշիւները Արդութեան դպրոցի Հոգաբարձութեան հետ և մանրամասն զեկուցանել Սինոդին։

Թ. 55. Յունվարի 25-ին Սինոդը լսեց Նորին Սրբազնապատուութեան Տ. Տեղակալի տարեոյց յունվարի 7-ի № 2245 առաջադրութիւնը, որով Նորին Սրբազնապատուութիւնը առաջադրում է ուղարկել Կ. Պոլսի Հայոց Մ. Աթոռի կողմից Ազգային Ս. Փրկչեան հիւանդանոցին, որոշեց. պատուիրել Մ. Աթոռի դանձապահին ուղարկել Կ. Պոլսոյ Տ. Պատրիարքի անունով 100 ռուբլի իբրև նպաստ Ս. Փրկչի ազգային հիւանդանոցին սոյն 1912 թ. համար։

Թ. 57. Յունվարի 25-ին Սինոդը լսեց այրի Նատալիա Աղայեանի ամսոյս 2-ի խնդիրը, իւր հանգուցեալ ամուսնու՝ Ղազարոս Աղայեանի կենսաթոշակի մասին, որոշեց. ի Տէր հանգուցեալ Մկրտիչ I կաթուղիկոսի կոնդակի իմաստի համաձայն կարճել հանգուցեալ Ղազարոս Աղայեանի կենսաթոշակի տուչութիւնը՝ նորա մահուան պատճառով, թողնելով առանց հետևանքի այրի Նատալիա Աղայեանի խնդիրը։

Թ. 59. Յունվարի 27-ին Սինոդը լսեց Մ. Աթոռի միաբան Տ. Կոմիտաս վարդապետի 1911 թ. դեկտեմբերի 26-ի յայտարարութիւնը իւր միաբանական ռոճիկը կարճելու մասին. որոշեց. որովհետև 1910 թ. նոյեմբերի 1-ից սկսած արդէն Տ. Կոմիտաս վարդապետը միաբանական ռոճիկ չէ ստացել, ուստի այդ ժամանակուանից նրա ռոճիկը իւր խնդրի համաձայն կարճուած համարել, քանի որ դորանից յետոյ չէ վերադարձել Մայր Աթոռ և այդ մասին իւր իշխանութեանը ոչ մի տեղեկութիւն չէ տուել։ Վճռիս մասին տեղեկութիւն տալ Կոմիտաս վարդապետին և Մայր Աթոռի դանձապահին։